ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԲԱԼՈՒԻ ԾՆԱՁ ԳԻՒՂԻ

ԿՐԹԱՍԻՐԱՑ ԼՆԿԵՐՈՒԹԵԱՆ



Հիմնուած 1902 Սեպտեմբեր 1ին.

ՆԻՒ-ԵՕՐՔ

Տպարան «ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅՈՑՑԱՆ»ի

1908

ՀԻՄՆԱԳԻՐՔ

—0—

Պր. Հայրապետ Մելիքեան

» Սարգիս Կիւլէզեան

» Սարգիս Սահակեան

» Յարութիւն Կիրակոսեան

» Մարտիրոս Տէր Մելիտոսեան

» Մկրտիչ Փափազեան

» Պողոս Տէր Մանուէլեան

» Աւետիս Կարապետեան

» Կարապետ Էլլեան

» Արամ Կիւլէզեան

ԾԱՌԱՋԱԲԱՆ

Մեր դարաւոր և վտանգաւոր թշնամիներէն մէկն ալ տգիտութիւնն է, խաւարը, որ օր ըստ օրէ արագ քայլերով մեզ դէպի անկում կը տանի։ Այդ թշնամին աւելի ևս վտանգաւոր է անով, որ նա կը պահուի մեր մէջ, մեր իսկ անտարբերութեան շնորհիւ։

Ապրիլ ցանկացող և զգաստ մարդիկ թշնամիներու և վտանգներու դէմ ինքնապաշտպանութեան և ապահովութեան միջոցներ ձեռք կառնեն. հետևի՛նք մենք ալ այդ միակ գործնական և պատուաւոր միջոցին։

Ներկայ պարագային ձեռք առնելիք միջոցը՝ դպրոցի մը հիմնարկութիւնն ու պահպանումն է հայրենիքի մէջ, որուն սպառնացող թշնամին ոչ թէ միայն օտարն է իր զինուորական ուժով և թնդանօթներով, այլ ինչպէս ըսինք, տգիտութիւնը, խաւարը։ Նա իր աւերիչ գործը կը կատարէ անզգալաբար, քայլ առ քայլ, և նա կը սնանի մեր մէջ մեր ժլատութեան և մեր արծաթասիրութեան պատճառով։ Հերի՛ք, որքան մեր Եսի և մեր գրպանի մասին մըտածենք, քիչ մըն ալ մենէ դուրս, մեզ շրջապատողներու բարօրութեան մասին մտածենք։

Մեզ՝ մի խումբ Բալուցիներուս համար, ոճիր, ինքնասպանութիւն կըլլար, եթէ՝ ապրելով այս յառաջադէմ և լուսաւոր աշխարհի մէջ, չաշխատինք գոնէ, ասոր թեթև ճառագայթները մեր խաւարապատ ծննդավայրը փոխադրել։

Որ կողմը դառնանք, աչքերնիս ուր ալ դարձնենք, գործ, իրարանցում և անդուլ աշխատանք կը նկատենք։ Լեռներ կը հարթուին, ընդծովեայ հսկայական ուղիներ կը շինուին, ստորերկրեայ զարմանալի ճանապարհներ կը կառուցուին, երևակայութենէ դուրս մեքենաներ և արհեստներ կնշմարենք ևայլն, և այս բոլոր հրաշալիքները կը կատարուին միմիայն ուսման, գիտութեան, կրթութեան, մի խօսքով ԴՊՐՈՑի շնորհիւ։

Իսկ այս բոլորի դէմ ի՞նչ ունինք մենք հայերս, մասնաւորապէս Բալուցիներս։—Ոչինչ։ Դեռ գիտութեան, մեքենաներու և հրաշալիքի չքնաղ դարի մէջ նահապետական վաղեմի սովորութիւններն են, որ մեզ կը ղեկավարեն, իսկ մեր դաստիարակները համբակ տիրացուներ են, որոնց գիտական ողորմելի պաշարը քանի մը դար առաջ կրնար մարդ զարմացնել շնորհիւ համատարած տգիտութեան։

Կեանքի մէջ գոյութիւն պահելու համար հրամայական է ունենալ յարմարագոյն միջոցներ. իսկ այդ միջոցները մենք պէտք է ձեռք բերենք ԴՊՐՈՑէն։

Առանց դպրոցներու և կանոնաւոր ուսման՝ մենք կը

մենք խեղճ. վիզը ծուռ, աղքատ, հալածուած, օտարներու և յատկապէս ուսումնականներու ստրուկը և անոնց փշրանքներով կերակրուողներ միայն։

Առանց ուսման և ժամանակակից դպրոցներու մենք իսպառ զուրկ կմնանք յառաջդիմութեան տարրերէն և մըտաւորական երիտասարդութենէն, որ ժողովուրդներու վերածնութեան և առաջդիմութեան ամենագլխաւոր ազդակը եղած է։

Կանոնաւոր դպրոցներ, կրթուած երիտասարդութիւն, ահա՛, այն փրկարար ղեկը, որ կեանքի փոթորկոտ ծովի մէջ ժողովուրդները ապահով և անվտանգ ղէպի նաւահանգիստը կառաջնորդեն։

Ահա՛, այսպիսի համոզումներով, մենք՝ մի խումբ Բալուցիներս, հրապարակ կուգանք նպաստելու մեր Շնաղ գիւղի դպրոցին, անոր յառաջդիմութեան և յարատեւութեան համար յօժարակամ նուէր բերելով բանուորական դաժան աշխատանքով ձեռք բերած մեր սէնթերը։

Ուսումը, արևի պէս կը փարատէ խաւարը և կազատէ մարդկային ուղեղը հնութեան և նախապաշարումներու կապանքներէն և ազատ թռիչք կուտայ մտքին՝ նորանոր նաւճումներ ընելու գիտութեան և բնութեան գաղտնիքներուն մէջ։

Արդ, գործի սկիզբը դրուած է, կը մնայ շարունակել

զայն և ապագային քաղել անոր բազմապատիկ օգուտները։

Ո՛վ որ կը համակրի մեր այս օգտաշատ գործին թող աջակցի մեզ, որպէսզի առաւել արդիւնաւէտ լինի մեր ձեռնարկը և դէթ, այսուհետև մեր եղբայրները «մտաւոր կոյրեր» չըլլան այս լուսաւոր դարու մէջ։

Կեցցէ՛ Ժողովուրդ.
Կեցցէ՛ Ուսում.
Կեցցէ՛ Դպրոց։



Մեր խեղճ ազգը ուսում չունի,
Չունի ուսում՝ խելք ալ չունի.
Խելօքներս այդ լաւ գիտենք,
Բայց, ա՜խ, միայն մենք կը խօսենք։

Հայի տղան գրքեր չունի,
Վարժարանը վարպետ չունի.
Գիտուններս այդ լաւ գիտենք.
Գիտենք և միայն կը խօսենք։

Հայ տերտերը կարդալ չգիտէ,
Հայ տիրացուն շատ տգէտ է.
Եպիսկոպոսքս այդ ճիշդ գիտենք,
Օգնելու տեղ՝ լոկ կը խօսենք։

ՔԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ

Աստուած ստեղծ զմարդ հողագործ,
Դաշտի մշակ աշխատաւոր.
Անէ՛ծք ձեւին այն չարաբեաստ,
Որ զմարդն արար արիւնագործ։

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՆՊԱՏԱԿ

Յօդ. 1.—Ընկերութեանս նպատակն է Բալու Շնաղ գիւղի մէջ դպրոց մը պահել՝ վճարելով ուսուցիչներու թոշակը և հոգալով դպրոց յաճախող աշակերտաց (Շնաղցի կամ ոչ-Շնաղցի) անխտիր, դպրոցական բոլոր ծախքերը։

ՀԱՍՈՅԹԻ ՄԻՋՈՑՆԵՐ

Յօդ. 2.—(Ա.) Մուտքի տուրքեր.

(Բ.) Անդամավճարներ.

(Գ.) Նուէրներ.

(Դ.) Հանդէսներէ, ժողովներէ և այլնէ գոյացած հասոյթներ։

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ

Յօդ. 3.—Ամէն հայ կարող է անդամակցիլ Ընկերութեան՝ առանց սեռի կամ դաւանանքի խտրութեան։

Յօդ. 4.—Կրթ. Ընկերութեանս անդամակցիլ ուզողը պէտք է անձամբ դիմէ Մասնաճ. ի Վարչութեան և պէտք է Ընկերութեան անդամներէն առաջարկող մը և երկրորդող մը ունենայ, որոնք առնուազն պէտք է 6 ամիս Ընկերութեան անդամակցած լինին։

Յօդ. 5.—Շնազ գիւղացիներէն Ընկերութեան անդամակցիլ ցանկացողները պարտաւոր են վճարել 5 տոլար մուտք և 25 սենտ ամսական։

Յօդ. 6.—Ոչ-Շնազցիներէն անդամակցիլ ցանկացողները պարտաւոր են վճարել 1 տոլար մուտք և 25 սենտ ամսական։

Յօդ. 7.—Իւրաքանչիւր անդամ կէտ առ կէտ պարտաւոր է կատարել ա՛յն բոլոր պարտականութիւնները, որոնք ընդգծուած են ներկայ կանոնագրի մէջ։

Յօդ. 8.—Ընկերութեան շահերուն թէ՛ բարոյապէս և թէ նիւթապէս հակառակ գործող մի անդամ պիտի վտարուի Ընկերութենէն, Ընդհանուր Ժողովի որոշումով։

Յօդ. 9.—Անդամ մը, որ առանց բանաւոր պատճառի իր վեց ամսուան ամսավճարը անվճար թողած է, ժողովներու մէջ քուէ տալու իրաւունքէն կը զրկուի։

Յօդ. 10.—Ամերիկայէն Երկիր մեկնող անդամ մը իրաւունք չունի ոևէ յարաբերութիւն ունենալ Ընկերութեան հետ։

Յօդ. 11.—Ընկերութեան անդամներէն ոևէ մէկը եթէ տարբեր քաղաք մեկնի և հոն Մասնաճիւղ գոյութիւն չունենայ, պարտաւոր է ամսականները վճարել իր պատկանած Մասնաճիւղին։

Յօդ. 12. Ոևէ անդամ իրաւունք չունի Շնազ գիւղի դպրոցի հոգաբարձութեան հետ թղթակցելու Ընկերութեան գործերու նկատմամբ։

Յօդ. 13.—Վտարուած կամ հրաժարած անդամ մը՝ Ընկերութեան վրայ ո՛ևէ պահանջ ունենալէ կը դադրի։

ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ

Յօդ. 14.—3-էն 5 հոգիէ բաղկացեալ խումբ մը օրինաւոր Մասնաճիւղ մը կազմելու իրաւունքը ունի։

Յօդ. 15.—Իւրաքանչիւր Մասնաճիւղ կընտրէ Վարչութիւն մը բաղկացած 3-էն 5 անդամներէ։

Յօդ. 16.— Մասնաճիւղի Վարչութիւնը անդամական ժողովներու որոշումները և անոր ընթացիկ գործերը լրիւ գործադրող մարմինն է, որը իր մէջէն կընտրէ իր դիւանը։

Յօդ. 17.—Մասնաճիւղի [illegible] բոլոր [illegible] պարտաւոր [illegible] եկած պաշտօնական գրութիւն[illegible]ական Ժողով հրաւիրողը Կեդր. Վարչութիւնն է։

Յօդ. 18.—Մասնաճիւղերը մէկ ամիս առաջ հաղորդել Մասնաներ սարքել։ [illegible]որ է Պատգամաւորական ժողովի գումարման նաև ժողովի օրակարգը, որու վրայ [illegible]նց նաև Ժողովի օրակարգը, որու վրայ [illegible]

Յօդ. 19.—Իւրաքանչիւր Մ[illegible]ն աւելցնել նաև ուրիշ հարցեր։ Ժարեալ և կամ արտաքսուած [illegible]ոգամաւոր պարտաւոր է իր Մասնաճիւղերուն և Կեդրոնական [illegible]անձնարարական մը ունենալ։

Յօդ. 20.—Իւրաքանչիւր անդամ իրաւունք ունի բողոքել թէ Վարչութեան և թէ՛ անդամական ժողովի որոշումներու դէմ, Կեդր. Վարչութեան կամ Պատգամաւորական Ժողովին։

Յօդ. 21.—Մասնաճիւղերու Վարչութեան կամ պարզ անդամներէն մէկին հրաժարման դէպքին, գրաւոր հրաժարականը պէտք է քննուի անդամական ժողովի մէջ և ըստ այնմ կարգադրութիւն ըլլայ։

Յօդ. 22.—Մասնաճիւղ մը երբ նկատէ իր Վարչութեան ո՛և է մէկ զեղծումը, իրաւունք ունի իսկոյն հրաժարեցնել և ընտրել նորը, տեղեկագրելով մանրամասն Կեդր. Վարչութեան։

Յօդ. 23.—Մասնաճիւղ մը երբ իր մէկ տարուան պարտականութեանց մէջ թերացած կը լինի, Պատգամաւորական Ժողովին մէջ ձայն ունենալէ կը դադրի, ի բաց առեալ երբ թերացումի պատճառները՝ յետ քննութեան՝ Պատգամաւորական ժողովը օրինաւոր գտնէ։

Յօդ. 24.—Լուծուած Մասնաճիւղի գոյքերը պիտի յանձնուին Կեդր. Վարչութեան։

ԱՆԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Նիւթապ-
րութենէն, Ընդհանուր Ժողովի որոշ-

Յօդ. 9.—Անդամ մը, որ առանց Մասնաճիւղի վերաբերեալ վեց ամսուան ամսավճարը անվճարուող պաշտօնական մարմինն քուէ տալու իրաւունքէն կը զրկուի։ներէ։

Յօդ. 10.—Ամերիկայէն Երկիրներու օրակարգը կ պատրաստէ չունի ոևէ յարաբերութիւն ունեցմանակ անդամներու կողմէն ալ

Յօդ. 11.—Ընկերութեան ,ՒԼ ի քննութիւն։

Յօդ. 27.—Անդամական ժողովի բացումը կը կատարուի նախորդ ժողովի արձանագրութիւնը կարդալով և վաւերացնելով։

Յօդ. 28.—Անդամական ժողովները պարտաւոր են գումարիլ ամիսը մէկ անգամ և իրենց արձանագրութիւնը ունենալ։

Յօդ. 29.—Իւրաքանչիւր Մասնաճիւղ ուրիշ քաղաք մը փոխադրուող իր մէկ անդամին պէտք է յանձնէ յանձնարարական մը, որը ներկայացնէ իր նոր գնացած տեղի Մասնաճիւղի ընկերներուն։

ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Յօդ. 30.—Շնազ գիւղի Կրթասիրաց Ընկերութիւնը տարին մէկ անգամ կունենայ Պատգամաւորական Ժողով, որը կգբաղի Ընկերութեան վերաբերեալ բոլոր հարցերով։

Յօդ. 31.—Պատգամաւորական Ժողովը օրինաւոր կը համարուի երբ պատգամաւորները մեծամասնութիւն կը կազմեն։

Յօդ. 32.—Պատգամաւորական Ժողովը իրաւունք ունի բոլոր Մասնաճիւղերու գործերուն միջամտել։

Յօդ. 33.—Պատգամաւորական Ժողով հրաւիրողը Կեդր. Վարչութիւնն է, որը պարտաւոր է Պատգամաւորական ժողովի գումարման տեղը և ժամանակը մէկ ամիս առաջ հաղորդել Մասնաճիւղերուն, ուղարկելով անոնց նաև ժողովի օրակարգը, որու վերայ Մասնաճիւղերը կարող են աւելցնել նաև ուրիշ հարցեր։

Յօդ. 34.—Իւրաքանչիւր պատգամաւոր պարտաւոր է իր Մասնաճիւղի կնիքով վաւերացուած յանձնարարական մը ունենալ։

Յօդ. 35.—Պատգամաւոր մը Պատգամաւորական ժողովին երկու ձայն ներկայացնելու իրաւասութիւնը կը վայելէ, երբ հեռաւոր Մասնաճիւղերէն ստացած է։

Յօդ. 36.—Պատգամաւորական ժողովը կընտրէ իր մէջէն դիւան մը, որուն պաշտօնավարութեան շրջանը կը տևէ մինչև ժողովի վերջանալը։

Յօդ. 37.—Պատգամաւորական ժողովի որոշումները կը տրուին ձայներու մեծամասնութեամբ։

Յօդ. 38.—Պատգամաւորական ժողովը՝ պատգամաւորներու ձայներու մեծամասնութեամբ կընտրէ Կեդր. Վարչութիւն մը, բաղկացած 3-5 անդամներէ, կընտրէ նաև 3-5 հոգիէ բաղկացեալ Խնամակալութիւն Շնազի մէջ դպրոցը կառավարելու համար։

Յօդ. 39.—Արտակարգ Պատգ. ժողով կարելի է գումարել, երբ Մասնաճիւղերու մեծամասնութիւնը պահանջէ։

ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Յօդ. 40.—Կեդր. Վարչութիւնը և Մասնաճիւղերու Վարչութիւնները իրենք իրենց մէջէն կընտրեն Ատենապետ մը, Ատենադպիր մը, Գանձապահ մը և Կնքապահ մը։

ԱՏԵՆԱՊԵՏԻ ՊԱՇՏՕՆՆ Է

Ա. Որոշեալ ժամանակներուն ժողովի հրաւիրել Վարչութեան անդամները։

Բ. Եղած բոլոր որոշումներու անթերի գործադրութեան հսկել։

Գ. Ստորագրել իր անունը՝ եղած բոլո՛ր պաշտօնական գրութիւններուն տակ, Ատենադպիրի հետ։

ԱՏԵՆԱԴՊԻՐԻ ՊԱՇՏՕՆՆ Է

Ա. Ժողովներուն արձանագրութիւնը կազմել մասնաւոր տետրակի մը մէջ։

Բ. Թղթակցութիւն կատարել։

Գ. Վարչութեան եկած բոլոր գրութիւնները ստանալ և պաշտօնակցի մը ներկայութեամբ բանալ։

Դ. Ատենապետին հետ պաշտօնական գրութիւններու տակ ստորագրել։

ԿՆՔԱՊԱՀԻ ՊԱՇՏՕՆՆ Է

Վարչութեան կնիքի պահպանման նախանձախնդիր ըլլալ, և դնել պաշտօնական բոլոր գրութեանց տակ. առանց կնիքի գրութիւն մը անպաշտօն կը համարուի, իբաց առեալ Երկրի Խնամակալութեան գրած նամակները։

ԳԱՆՁԱՊԱՀԻ ՊԱՇՏՕՆՆ Է

Ա. Վարչութեան անունով եկած բոլոր դրամները ստանալ՝ փոխարէն ստացագիր տալով։

Բ. Վարչութեան ծախքերը հոգալ։

Գ. Ելևմտական կանոնաւոր հաշուետոմար ունենալ, իր միջոցով եղած բոլոր ծախքերուն և դրկուած դրամներուն ընկալագրերը ներկայացնել պատգամաւորական ժողովին։

Դ. Դրամական ամէն գործողութեանց տակ իր ստորագրութիւնը դնել։

Յօդ 41.—Կեդր. Վարչութիւնը իրաւունք չունի Ընկերութեան դրամը դպրոցական ծախքերէ զատ ուրէ գործի յատկացնել կամ

շահով փոխ տալ։

Յօդ. 42.—Ընկերութիւնը լուծուած կը համարուի, եթէ իր անդամներուն թիւը 4-էն պակաս ըլլայ։

Յօդ. 43.—Եթէ Ընկերութիւնը լուծուի, պատրաստի դրամը մաս առ մաս ղրկուելու է գիւղի դպրոցին։

Յօդ. 44.—Ընկերութեան նպատակը կը մնայ անփոփոխ, իսկ կանոնագրի ու